

ՍՅՈՒՋԱՆՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության
մաքսային կանոնների խախտումների վերաբերյալ
վարույթների իրականացման բաժնի մաքսային տեսուչ

**ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ԴԵՐԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՄԱՔՍԱՅԻՆ ԻՐԱՎԱԶԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Ժամանակակից շուկայական տնտեսության պայմաններում մաքսային գործը՝ որպես կապող օղակ պետության և արտաքին տնտեսական գործունեության մյուս մասնակիցների միջև, ստեղծում է փոխգործակցության և փոխկապակցվածության հատուկ հարաբերություններ: Պետությունների արտաքին տնտեսական համագործակցությունն իրականացվում է Եվրոպական և Եվրասիական տնտեսական միությունների ակտիվ մասնակցությամբ:

Հայաստանի Հանրապետությունն իրականացնում է միասնական մաքսային քաղաքականություն, որն արտաքին և ներքին տնտեսական քաղաքականությունների անբաժանելի մասն է և մեծ դեր է կատարում այլ երկրների հետ առևտրային հարաբերությունների ձևավորման ու զարգացման գործում¹: ՀՀ մաքսային քաղաքականության հիմնական խնդիրներից են արտաքին տնտեսական գործունեության մաքսասակագնային կարգավորման մեխանիզմի, մաքսային մարմինների՝ իրավանորմատիվային հիմքի կատարելագործումը, մաքսային օրենսդրության դրույթների կիրառումը և վերջիններիս նկատմամբ վերահսկումը, համագործակցության ապահովումն օտարերկրյա պետությունների մաքսային և այլ իրավասու մարմինների հետ, մաքսային գործի վերլուծման, հետազոտման իրականացումը²:

Մաքսային քաղաքականությունը համարվում է մաքսային գործի հիմքը: Մաքսային քաղաքականության իրականացման հիմնական միջոցներն են մաքսային հսկողությունը,

մաքսային ձևակերպումը, սակագնային և ոչ սակագնային կարգավորման միջոցները:

Պետք է նշել, որ մաքսային համակարգն իր էությանը դիմամիկ զարգացող կառուցակարգ է. այսինքն՝ տնտեսական նոր որակի հարաբերությունների անցնելիս ենթադրվում են համապատասխան փոփոխություններ ինչպես մաքսային քաղաքականության նպատակներում, այնպես էլ խնդիրներում³: Անկախ Հայաստանի մաքսային համակարգը ստեղծվել է 1992 թ. հունվարի 4-ին ՀՀ նախագահի հրամանագրով⁴: «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում մաքսային գործն ընդգրկում է ինչպես ԵԱՏՄ մաքսային, այնպես էլ Հայաստանի Հանրապետության սահմանով ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխման կարգն ու պայմանները, մաքսային վճարների գանձումը, մաքսային ձևակերպումները, մաքսային հսկողությունը և մաքսային քաղաքականության իրագործման այլ միջոցներ⁵:

Այդ հարաբերությունները հանրային հարաբերություններ են, քանի որ դրանք կարգավորող և մասնակիցը պետությունն է: Վճարել դատարանը գտնում է, որ հանրային իրավահարաբերություններն այն հարաբերություններն են, որոնք ծագում են պետական կառավարման մարմինների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց միջև ձևավորված շփումներում⁶: Լինելով հանրային հարաբերություն՝ **մաքսային իրավահարաբերությունը բնորոշ-**

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 117 2020

1. Սուքիասյան Գ. Ա., Սուքիասյան Ն. Գ., Մաքսային իրավունք, ուսումնական ձեռնարկ բուհերի ուսանողների համար: Երևան, հեղ. հրատ., 2016, 470 էջ:
2. www.petekamutner.am.
3. Գրիգորյան Ռ. Լ., Մաքսային գործ, ուսումնական ձեռնարկ, Երևան, 2012, 107 էջ:
4. ՀՀ նախագահի հրամանագիրը Հայաստանի Հանրապետության մաքսային վարչություն ստեղծելու մասին: Հրաման ՆՀ-58, ուժի մեջ է մտել 04.01.1992 թ.:
5. Տե՛ս «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենք՝ ՀՕ-241-Ն՝ ընդունված 17.12.2014 թ., ուժի մեջ է մտել 02.01.2015: ՀՀՊՏ 2014.12.30/76 (1089).1 Հոդ.1253.30:
6. Տե՛ս «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենք՝ ՀՕ-241-Ն՝ ընդունված 17.12.2014 թ., ուժի մեջ է մտել 02.01.2015: ՀՀՊՏ 2014.12.30/76 (1089).1 Հոդ.1253.30:

վում է որպես այնպիսի հասարակական հարաբերություն, որը կազմում է մաքսային գործի համապատասխան տարր, մտնում նրա կառուցվածքի մեջ և կարգավորվում է մաքսաիրավական նորմերով:

Ցանկացած իրավահարաբերության՝ այդ թվում մաքսայինին ներհատուկ են երեք հիմնական կառուցվածքային տարրեր. ա) մաքսային իրավունքի սուբյեկտներ (մաքսային իրավահարաբերության մասնակիցներ), բ) մաքսային իրավահարաբերության օբյեկտներ, գ) այդ իրավահարաբերության բովանդակություն:

• Մաքսային իրավահարաբերություններում կարևոր դեր ունեն **մաքսային ձևակերպումները**, առանց որոնց հնարավոր չէ իրականացնել ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխումը ՀՀ մաքսային սահմանով: ԱՏԳ-ն և, առաջին հերթին, արտաքին առևտուրը կապված են մաքսային սահմանով ինչպես իրավաբանական, այնպես էլ ֆիզիկական անձանց կողմից ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխման հետ, որի ընթացքում դրանք ենթակա են մաքսային ձևակերպման և հսկողության: ՀՀ մաքսային սահմանով ապրանքների և այլ առարկաների տեղափոխման նկատմամբ մաքսային հսկողության պահովման, դրանք մաքսային տարածք ներմուծելու, մաքսային սահմանից արտահանելու և ՀՀ տարածքով տարանցիկ փոխադրման պետական ու տնտեսական կարգավորման միջոցների կիրառումն ապահովելու նպատակով մաքսատան կամ մաքսային կետի պաշտոնատար անձինք կատարում են մաքսային ձևակերպման գործողություններ, որոնց իրականացման կարգը սահմանված է ԵԱՏՄ մաքսային օրենսգրքում, ՀՀ մաքսային օրենսգրքում, «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքում և օրենսդրական այլ ակտերում:

Մասնագիտական գրականության մեջ մաքսային ձևակերպումը բնորոշվում է որպես ապրանքների և տրանսպորտային միջոցների

բացթողման համար անհրաժեշտ, որոշակի հաջորդական գործողությունների և միջոցառումների ամբողջություն⁷: Մեկ այլ սահմանմամբ՝ մաքսային ձևակերպումը ներկայացվում է որպես ապրանքների և տրանսպորտային միջոցների՝ որոշակի մաքսային ընթացակարգով մաքսային սահմանով տեղափոխման և տվյալ ընթացակարգի գործողության ավարտման ընթացակարգ: Մեր կարծիքով՝ մաքսային ձևակերպումները մաքսային կանոնների ամբողջություն են, որոնք ուղղված են մաքսային սահմանով ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխման նկատմամբ իրավասու մարմինների կողմից պատասխանատվության միջոցների ապահովմանը:

Ընդ որում, մաքսային ձևակերպման գործողություն ասելով՝ պետք է հասկանալ ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների նկատմամբ փաստաթղթային և բեռնային բոլոր գործողությունների ամբողջականությունը՝ ներառյալ հայտարարագրումը և զննումը, մաքսային վճարումների կատարումը⁸:

ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 2-րդ հոդվածի 35-րդ մասի համաձայն՝ մաքսային հայտարարագրումը բնորոշվում է հայտարարատուի կողմից մաքսային մարմիններին մաքսային հայտարարագրի միջոցով ապրանքների վերաբերյալ տվյալների, մաքսային ընթացակարգի վերաբերյալ և (կամ) այլ տեղեկությունների հայտագրում՝ անհրաժեշտ ապրանքների բացթողման համար⁹:

ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մաքսային հայտարարագրումն իրականացվում է հայտարարատուի կամ մաքսային ներկայացուցչի կողմից, եթե սույն Օրենսգրքով այլ բան սահմանված չէ: Առկա կարգավորումների վերլուծությունից պարզ է դառնում, որ գործող օրենսդրությամբ սահմանված է հայտարարագրման իրավասություն ունեցող անձանց 2 շրջանակ՝ «*հայտարարարարու՝ անձ, որը հայտարարագրում է ապրանքներ կամ որի անունից հայտարարարար*

6. Տե՛ս թիվ ԵԱԲԴ/1369/02/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2010 թ. դեկտեմբերի 3-ի որոշումը: www.arlis.am.

7. **Сальникова А. В.**, Организация таможенного контроля товаров и транспортных средств, курс лекций, изд. во ВлГУ, 2015.

8. **Սուրիասյան Գ. Ա., Սուրիասյան Ն. Գ.**, նշվ. աշխ.:

9. ԵԱՏՄ մաքսային օրենսգրքը, ընդունված 11.04.2017, ուժի մեջ է մտել 01.01.2018, ՀՀՊՏ 2018.03.12/17(1375).1:

գրվում են ապրանքներ և «մաքսային ներկայացուցիչ, որը ներառված է մաքսային ներկայացուցիչների ռեեստրում և մաքսային գործառնություններ է կատարում հայտարարարուի կամ շահագրգիռ այլ անձի անունից և հանձնարարությամբ: Պետք է նկատել նաև, որ «Մաքսային Միության Մաքսային Օրենսգրքի 65-րդ հոդվածի համաձայն¹⁰՝ Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան՝ հայտարարատուն կամ հայտարարատուի անունից և նրա հանձնարարությամբ գործող մաքսային ներկայացուցիչը պատասխանատվություն է կրում մաքսային արժեքի հայտարարագրում նշված ոչ հավաստի տեղեկությունների և սույն Օրենսգրքի 188-րդ հոդվածով նախատեսված պարտականությունների չկատարման համար: Ընդ որում, այդ պատասխանատվության հիմքում ընկած է մեղքի սկզբունքը:

Մասնավորապես, ՀՀ մաքսային օրենսգրքի 189-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն¹¹՝ ֆիզիկական և պաշտոնատար անձինք մաքսային կանոնները դիտավորյալ կամ անզգուշորեն խախտելու համար ենթակա են պատասխանատվության:

Հետևաբար՝ **մեղքը, որպես վարչական զանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր տարր**, հանդիսանում է վարչական պատասխանատվության՝ իրավական միակ նախապայմանն ու նախադրյալը:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածն անդրադարձել է վարչական իրավախախտման հասկացությանը՝ վարչական իրավախախտումը (զանցանք) բնորոշելով որպես պետական կամ հասարակական կարգի, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման՝ սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգուշ) այնպիսի գործողություն կամ անգործություն, որի համար օրենսդրությամբ

նախատեսված է վարչական պատասխանատվություն:

ՎԻՎ օրենսգրքի 32-րդ հոդվածի համաձայն՝ տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները: Սույն օրենսգրքի 279-րդ հոդվածով նախատեսված են վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննելիս պարզման ենթակա հանգամանքները. մասնավորապես, մաքսային մարմինը պարտավոր է պարզել՝

- կատարվել է, արդյոք, վարչական իրավախախտում.
- արդյոք տվյալ անձը մեղավոր է այն կատարելու մեջ.
- արդյոք նա ենթակա է վարչական պատասխանատվության.
- կա՞ն, արդյոք, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքներ.
- պատճառվել է, արդյոք, գույքային վնաս,
- գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ¹²:

Նշված սկզբունքը սերտորեն առնչվում է նաև վարչական պատասխանատվության մեկ այլ՝ անձնական պատասխանատվության սկզբունքի հետ, որի համաձայն՝ անձը ենթակա է պատասխանատվության միայն անձամբ կատարած իրավախախտման համար:

Ելնելով վերոհիշյալից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող նորմը կիրառելիս յուրաքանչյուր կոնկրետ դեպքում իրավակիրառողը պարտավոր է, ելնելով գործի կոնկրետ հանգամանքներից, պարզել լիազորված անձի, լիազորողի և տեղափոխողի մեղքի առկայությունը՝ ըստ այդմ որոշելով պատասխանատու սուբյեկտին¹³: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ լիազորված անձը գործում է տեղափոխողի անունից և ի շահ վեր-

10. Տե՛ս Մաքսային Միության Մաքսային Օրենսդրությունը ընդունված 27.11.2009, ուժի մեջ է 02.01.2015, ՀՀՊՏ 2015.01.21/3(1092) Հոդ.29:

11. Տե՛ս ՀՀ մաքսային օրենսգրքի ՀՕ-83, ընդունված 06.07.2000, ուժի մեջ է: 01.01.2001, ՀՀՊՏ 2000.08.21/19 (117):

12. Տե՛ս «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքը, ընդունված 06.12.1985, ուժի մեջ է 01.06.1986, ՀՍՍՀԿՍ 1985/2:

13 Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումը քաղաքացի Արտաշես Անտոնյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ Մաքսային Օրենսգրքի 203-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով, ՍԴՈ թիվ 920, Ընդունված: 12.10.2010. ուժի մեջ է: 12.10.2010:

ջինիս՝ համապատասխան ակտի հիման վրա տրամադրված լիազորությունների շրջանակներում, և հայտարարագրումն իրականացնում է տեղափոխողի տրամադրած տեղեկատվության հիման վրա՝ այդ լիազորությունների շրջանակներում կատարած ցանկացած գործողության համար վիճարկվող դրույթով սահմանված պատասխանատվության սուբյեկտ պետք է հանդիսանա տեղափոխողը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ձևավորված իրավակիրառական այն պրակտիկան, երբ չապահովելով իրավախախտման համար մեղավորի պատասխանատվությունը և բոլոր դեպքերում որպես պատասխանատվության սուբյեկտ դիտարկելով տեղափոխվող ապրանքների կամ տրանսպորտային միջոցի նկատմամբ որևէ գույքային իրավունք չունեցող լիազորված անձին, թույլ չի տալիս արդյունավետորեն իրացնել վիճարկվող նորմով սահմանված պատասխանատվության իրավաչափ նպատակը. այն է՝ ապահովել տնտեսավարող սուբյեկտի կողմից Սահմանադրության 45-րդ հոդվածով ամրագրված պարտականության իրական կատարումը:

Այս խնդրի իրավակարգավորումը հետագա համակարգային և հանգամանալից բարեփոխման անհրաժեշտություն ունի: Ուստի, ելնելով վերոգրյալ իրավակարգավորումներից՝ պետք է հստակեցնել, թե ո՞վ է հանդիսանում իրավախախտման սուբյեկտ այն դեպքում, երբ պատվիրատուի և կատարողի միջև կնքված մաքսային ծառայությունների մատուցման պայմանագրով ապրանքի վերաբերյալ հավաստի տեղեկությունների ներկայացման պարտավորությունն ընկնում է որպես պատվիրատու հանդես եկող իրավաբանական անձի տնօրենի և/կամ լիազոր ներկայացուցչի վրա, սակայն վերջինիս տրամադրած ոչ հավաստի և ամբողջական տեղեկությունների հիման վրա կատարողի (մաքսային ձևակերպումների մասնագետ) կողմից սխալ հայտարարագրման պատասխանատվությունը կրում է կատարողը:

Իրավահարաբերության սուբյեկտներին անդրադառնալիս հարկ է նկատել այն փաստը, որ որպես հայտարարատու «Մաքսային տարանցում մաքսային ընթացակարգով ապրանքների ներկրման դեպքում հանդիսանում է փոխադրողը: ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 142-րդ հոդվածի համաձայն՝ «Մաքսային տարանցում մաքսային ընթացակարգն այնպիսի մաքսային

ընթացակարգ է, որի դեպքում ուղարկող մաքսային մարմնից նշանակման մաքսային մարմին ապրանքները փոխադրվում են առանց մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման: «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգը կիրառվում է Միության մաքսային տարածքով, ինչպես նաև Միության անդամներ չհանդիսացող պետությունների տարածքներով օտարերկրյա և Միության ապրանքների փոխադրման համար: Այս մաքսային ընթացակարգով ձեւակերպված՝ Միության ապրանքները պահպանում են Միության ապրանքների կարգավիճակը: «Հայաստանի Հանրապետության» «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» 2014 թվականի հոկտեմբերի 10-ի պայմանագրի 5-րդ հավելվածի 5-րդ կետի համաձայն՝ Եվրասիական տնտեսական միության ապրանքները պահպանում են Եվրասիական տնտեսական միության ապրանքների կարգավիճակն օտարերկրյա պետությունների տարածքներով Միության մաքսային տարածքից դեպի Միության մաքսային տարածք «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան տեղափոխման դեպքում¹⁴:

ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 83-րդ հոդվածն անդրադարձել է այն հանգամանքին, որ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի հայտագրման դեպքում կարող են հանդես գալ փոխադրողը՝ այդ թվում նաև մաքսային փոխադրողը, առաքողը, եթե նա Մաքսային միության անդամ պետության անձ է: Միաժամանակ հստակեցրել է, որ Օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Միության անդամներ չհանդիսացող պետությունների տարածքներով Միության մաքսային տարածքի մի մասից Միության մաքսային տարածքի մեկ այլ մաս Միության ապրանքների փոխադրման դեպքում փոխադրողը, անկախ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների հայտարարատուն լինելու հանգամանքից, պարտավոր է ապահովել ուղարկող մաքսային մարմնի կողմից սահմանված ժամկետում ապրանքներն ու դրանց փաստաթղթերը հասցնել ապրանքների առաքման վայրը, ապահովել ապրանքների, մաքսային կապարակներների և կնիքների կամ նույնականացման այլ միջոցների

պահպանվածությունը, թույլ չտալ ապրանքների բեռնաթափումը, փոխաբեռնումը (վերաբեռնումը) և դրանց հետ կատարվող բեռնային այլ գործողությունների իրականացումը, ինչպես նաև այդ ապրանքները փոխադրող տրանսպորտային միջոցների փոխարինումը Միության անդամներ չհանդիսացող պետությունների տարածքներում՝ առանց ուղարկող մաքսային մարմնի թույլտվության:

Մասնավորապես, ՀՀ-ում գործող օրենսդրությունը նախատեսում է երրորդ երկրից ներմուծվող բեռների հայտարարագրումը փոխադրողի, մաքսային փոխադրողի, առաքողի կողմից, մինչդեռ, մեր կարծիքով, փոխադրողին վարչական պատասխանատվության ենթարկել փոխադրվող բեռի անվանման, նկարագրության, գնի, քանակի, ապրանքների մաքսային արժեքի վերաբերյալ ոչ հավաստի տեղեկություններով հայտագրման համար, համարում ենք ոչ իրավաչափ՝ նկատի ունենալով, որ վերջինս իրազեկված չէ ապրանքի տեխնիկական բնութագրի մասին և վերջինս հայտարարագրումն իրականացնում է մատակարար ընկերության տրամադրած բեռնառաքող փաստաթղթերի հիման վրա և որ փոխադրողը փաթեթավածքում առկա ապրանքի եղելությունը

չի կարող պարզել հայտարարագրի լրացման ժամանակ անկախ նախնական զննման իրավունքից օգտվելու հանգամանքից:

Միաժամանակ, ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերությամբ նախատեսված է, որ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների չհայտարարագրման կամ ոչ իրենց անվանմամբ հայտարարագրման կամ հայտարարագրման ժամանակ ոչ ճշգրիտ տեղեկությունների նշման դեպքում, որի արդյունքում չի առաջանում մաքսային վճարների պակաս հաշվարկում կամ չհաշվարկում, ինչպես նաև ոչ սակագնային կարգավորման միջոցների չկիրառում, որն առաջացնում է տուգանքի նշանակում՝ 50 հազար դրամի չափով:

Նշված դեպքում որպես իրավախախտման սուբյեկտ և հայտարարատու՝ պատասխանատվության է ենթարկվում փոխադրողը, մաքսային փոխադրողը կամ առաքողը տարանցման հայտարարագրի սխալ լրացման համար. մինչդեռ, կարծում ենք, որ իրավախախտման սուբյեկտ կարող է հանդիսանալ ճշգրիտ տեղեկություններ տրամադրող անձը:



14. Տե՛ս «Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» 2014 թվականի հոկտեմբերի 10-ի պայմանագիր: Տե՛ս նաև ՀՀ Սահմանադրական դատարանի N ՍԴՈ-1175 որոշումը, ընդունված 14.11.2014 թ.: Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը որոշեց՝ «Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

ՍՅՈՒԶԱՆՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության
մաքսային կանոնների խախտումների
վերաբերյալ վարույթների իրականացման բաժնի մաքսային տեսուչ

**ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ԴԵՐԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՔՍԱՅԻՆ
ԻՐԱՎԱՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Գիտական հոդվածի ուսումնասիրման առարկան այն հարաբերություններն են, որոնք առաջանում են մաքսային հայտարարագիրը լրացնելու և ներկայացնելու ընթացքում. ներկայացվել են նաև ապրանքների մաքսային հայտարարագիրը և մաքսային հայտարարագրի այլ տեսակները: Գիտական հոդվածի նպատակն է ուսումնասիրել մաքսային հայտարարագրի հայեցակարգը, ձևերն ու տեսակները: Այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները՝ հասկանալ մաքսային հայտարարագրի բնույթը, ուսումնասիրել մաքսային հայտարարագրի ձևերն ու տեսակները, հաշվի առնել մաքսային հայտարարագիր ներկայացնելու կարգն ու ժամկետները, բացահայտել սուբյեկտային կազմը, պարզաբանել մաքսային հայտարարագրի ձևերի կիրառման հիմնական խնդիրները և գտնել դրանց լուծման ուղիները:

Բանալի բառեր. մաքսային իրավունք, հայտարարագրում, հայտարարատու, մաքսային իրավախախտում, վարչական պատասխանատվություն, մաքսային տարանցում, փոխադրող:

СЮЗАННА ВАРДАНЯН

Таможенный инспектор Отдела управление по делам о нарушениях таможенных правил
Юридическое управление комитета государственных доходов РА

РОЛЬ И ЗНАЧЕНИЕ ДЕКЛАРАЦИЙ В ТАМОЖЕННЫХ ПРАВООТНОШЕНИЯХ

Предметом научной статьи является таможенное декларирование товаров и иные виды таможенного декларирования, отношения, возникающие в ходе заполнения и предоставления таможенной декларации. Целью научной статьи является изучение понятия, форм и видов таможенной декларации. Для решения поставленной цели необходимо решить следующие задачи: разобраться в сущности таможенного декларирования, изучить формы и виды таможенного декларирования, рассмотреть порядок и сроки подачи таможенной декларации, выяснить основные проблемы применения форм таможенного декларирования и найти способы их решения.

Ключевые слова: декларирование, таможенное право, декларант, таможенные нарушения, административная ответственность, таможенный транзит, перевозчик.

SYUZANNA VARDANYAN

Customs Inspector of Proceedings on Violations of Customs
Rules at State Revenue Committee of the RA

THE ROLE AND IMPORTANCE OF DECLARATION IN CUSTOMS LEGAL RELATIONS

The object of the study is the relationship arising in the course of filling and submitting a customs declaration. The subject of the this article is the customs declaration of goods and other types of customs declaration. The purpose of the scientific article is to study the concept, forms and types of customs declaration. To achieve this goal it is necessary to solve the following tasks: to understand the essence of customs declaration, to study the forms and types of customs declaration, having the right to perform customs declaration of goods placed under customs procedures, to consider the procedure and deadlines for submitting a customs declaration, to find out the main problems of applying the customs declaration forms and find ways to solve them.

Keywords: customs law, declaration, declarant, customs violations, administrative liability, customs transit, carrier.